ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես գիտենք, հայերենում յ բաղաձայնն ավելի թույլ արգելքով է արտասանվում և ավելի շատ է ձայն պարունակում, քան մյուս բաղաձայնները: Մյուսներից տարբերելու համար յ հնչյունը կոչում են **կիսաձայն**:

Կիսաձայն յ հնչյունի և որևէ ձայնավորի կապակցությունը կոչվում է երկհնչյուն:

Օրինակ՝ մայր, լույս, մատյան, ալյուր բառերի մեջ այ, ույ, յա կապակցությունները երկհնչյուններ են:

Հայերենն ունի հետևյալ երկհնչյունները՝ այ–հայր, քարայր, յա–Արաքսյա, շաբաթօրյակ, եյ (արտասանվում է էյ)–թեյ, Ջեյթուն, ե (արտասանվում է յե)–երազ, եղնիկ, Միքայել, յի–ամառային, գայի, ոյ (արտասանվում է օյ)–Նոյ, գոյ, յո–յոթանասուն, արդյոք, ույ–գույն, լույս, յու–արյուն, մյուս:

Հայերենի երկհնչյունների արտասանությունն ու գրությունը մեծ մասամբ համապատասխանում են, օրինակ՝ կղզյակ, Հրաչյա, հայր, թեյ, բույր, վայրկյան:

Առաջադրանքներ

1. Ընդգծիր տրված բառերից տասի երկհնչյունները:

Անագորույն, Անդրեյ, առօրյա, արդյունք, եռամսյակ, համբույր, հայկյան, հիմնադրույթ, հնադարյան, այբբենարան, այդպիսի, առավոտյան, դրախտավայր, ելույթ, հնչյուն, հնօրյա, ճայթել:

2. Բառերը խմբավորի՛ր աղյուսակում՝ ըստ *այ*, *յա*, *յու*, *ույ*, *ոյ*, *յո* երկհնչյունների:

Հայրիկ, հույզ, թյուր, կույս, համայն, ճայթյուն, թույլատրել, հոգ-յակ, ձյութ, ճառագայթ, խայթ, խնջույք, կայսր, մեհյան, միմյանց, ոսկյա, պայծառ, քառյակ, բայց, բյուր, բրդյա, գրքույկ, ակնա-բույժ, աղբյուր, այծ, այտ, ասույթ, ատյան, արծաթյա, արյուն, զեփյուռ, խոյ, հայց, յոդ, հետախույզ, հնամյա:

այ	յա	յու	ույ	ոյ	յո

3. Լրացրո՛ւ բաց թողնված երկհնչյունները:

Օֆել__, Վոլոդ__, Եղ__ազար, Արաքս__, Եվգեն__, Վիլ__մ, Սուք__ս, Վիկտոր__, Մար__մ, Սոֆ__, Միքա__ել, Գա__նե, Երեմ__:

4. *Հայելի*, *թեյ*, *մատյան*, *եղբայր*, *մայր*, *արյուն* բառերին ավելացրո՛ւ արմատ կամ ածանց, կազմի՛ր նոր բառեր և գործածի՛ր նախա-դասություններում:

ՅԱ–ԻԱ–ԵԱ

Յա երկհնչյունը իա տառերով է գրվում.

ա) հայերեն հետևյալ բառերում՝ հեքիաթ, կրիա, օվկիա-նոս, խավիար, բամիա, փասիան, ալելուիա,

բ) մի շարք անձնանուններում և ազգանուններում՝ Ազա-րիա, Անանիա, Բենիամին, Բունիաթ, Եղիա, Ալիսիա, Մա-րիամ, Մարիա, Լիա, Եղիազարյան, Սուքիասյան և այլն (բա-ցառություն են՝ Վանյա, Վոլոդյա, Իլյա և այլն),

գ) աշխարհագրական անունների վերջում՝ Ֆրանսիա, Բել-գիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Մալաթիա-Սե-բաստիա, Նոր Եդեսիա,

դ) օտար լեզուներից փոխառված բառերում՝ ակադեմիա, էներգիա, լաբորատորիա, միլիարդ, քիմիա, օլիմպիադա:

Կանանց օտար անունները գրվում են յա-ով, ինչպես՝ Էլյա, Լիլյա, Օլյա, Սոնյա, Մելանյա, Մարուսյա, Մանյա, Արաքսյա, Եպրաքսյա, Եվգենյա, Երմոնյա:

Մի քանի անուններ ունեն զուգաձևեր:

Աշխարհագրական անուն	Աղջկա (կնոջ) անուն
Ասիա (աշխարհամաս)	Ասյա
Սոֆիա (Բուլղարիայի մայրաքաղաքը)	Սոֆյա
Վիկտորիա (ջրվեժ և լիճ)	Վիկտորյա

Մի քանի բառերում էլ գրվում է եա, ինչպես՝ Անդրեաս, հրեա, իդեալ:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված *յա*, *իա* կամ *եա* երկհնչյունները:

Գերման__, գործուն__, գրասեն__կ, էքսկուրս__, խավ__ր, ծ__ծան, հեք__թ, միմ__նց, դաստ__րակ, բամ__, բար__ցական, Բուն__թ, Ջմյուռն__, էներգ__, ժան__կ, Կիլիկ__, կիրակնօր__, հոգ__կ, Ճապոն__, Երեմ__, Սոֆ__ (քաղաք), Սոֆ__(անուն), հր__, իդ__լ, այժմ__կան, Վիկտոր__ (անուն), Վիկտոր_ (ջրվեժ), Աս__ (անուն), Աս__ (աշխարհամաս), Անան__, ատ__ն, Արուս__կ, արևել__ն, մետաքս__, Մալաթ__, Մար__մ, Նատալ__, սար__կ, Սիր_, վերոհիշ__լ, փաս__ն, միջօր__կան, Անդր__ս, քվ__րկել:

2. Վերը թվարկած բառերը խմբավորի՛ր աղյուսակում՝ ըստ երկհնչյունների գրության:

յա	իա	եա

ՈՒՅ – ՅՈՒ

Ույ և յու երկհնչյունները ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են, օրինակ՝ բույր, ընկույզ, հյուր, ձյուն, արյուն, Սյունիք, Ծովագյուղ:

Պետք է զգուշանալ բառի մեջ ավելորդ յ ներմուծելուց: Արտասանել սյունակ, աղյուսակ, պայուսակ:

Առաջադրանքներ

1. Ընդգծի՛ր տրված բառերի երկհնչյունները:

Հյութ, անագորույն, արդյունք, եռանկյուն, համբույր, հիմնադրույթ, առյուծ, արյուն, ելույթ, հնչյուն, բյուրեղ, նյութ:

2. Լրացրո՛ւ բաց թողնված *ույ* կամ *յու* երկհնչյունները և խմբավորի՛ր:

Ընկ__զ, ողջ__ն, ձ__թ, զգ__շ, ս__նակ, աղ__սակ, ալ__ր, պա__սակ, բ__ր, բ__ր, հ__ս, հ__ս, ս__ն, ս__ն, առ__ծ, ողջ__ն, աշխ__ժ, շառաչ__ն, հնչ__ն, կապ__տ, հ__ր, մ__ս:

ույ	յու

3. Հետևյալ բառակապակցությունների իմաստն արտահայտի՛ր մեկ բառով՝ նշելով երկհնչյունների հնչյունափոխությունը (եթե կա):

Ատամներ բուժող, մանուկներին բուժող, պարույրի ձև ունեցող, դաշույնով հարվածել, վերքեր բուժող, շահույթ բերող, զրույց սիրող, հույսը կորցրած, լույս բերող, բուսականությունից զրկված:

Նմուշ՝ մանուկներին բուժող – մանկաբույժ